Հաստատում եմ

Դպրոցի տնօրեն՝ Պ.Պետրոսյան

Փոխտնօրեն՝ Ա.Ներսիսյան

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ – ՕՐԱԳԻՐ

2023-2024

XI

դասարան

Դասղեկ՝ Ա.Գրիգորյան

«Ուսուցումը այն ծաղկի թերթերից միայն մեկն է,որը կոչվում է դաստիարակություն»:

2023-2024 ուստարվա դաստիարակչական աշխատանքների նպատակներն ու խնդիրները

- Ձևավորել պատասխանատու վերաբերմունք ուսման նկատմամբ
- Աշակերտի մոտ ձևավորել հարգալից վերաբերմունք լեզվի, մշակույթի և ազգային ավանդույթների նկատմամբ՝ դարձնելով նրան այդ արժեքների կայուն կրող
- Սովորողների մոտ ձևավորել առողջ ապրելակերպի մշակույթ
- Էլ ավելի արդյունավետ դարձնել ընտանիք-դպրոց փոխազդեցության համակարգը՝ բարձրացնելով փոխադարձ վստահության մակարդակը:
- Հայտնաբերել և զարգացնել սովորողների ընդունակությունները դասդեկական ժամերի միջոցով
- Աշակերտների մեջ սերմանել հարգալից վերաբերմունք միմյանց և շրջապատի նկատմամբ
- Դաստիարակել ինքնակրթությամբ զբաղվելու պահանջ
- Ստեղծել առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ
- Զրույցներ միջոցով նպաստել աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը

Դասարանի բնութագիրը

Դասարանի գործունեության բնութագիր: 11-րդ դասարանում սովորում են 14 աշակերտներ՝ 6 տղա , 8 աղջիկ: Նրանք բոլորն էլ գիտակցում են ուսման կարևորությունը,հասկանում, որ պետության արժանի քաղաքացիներ միայն և միայն կարելի է դառնալ լավ սովորելով:Կան և՛ ուժեղ, և՛ թույլ աշակերտներ, բայց բոլորն էլ ձգտում են սովորել ուժերի ներածին չափով:Միայն մեկ աշակերտ մի քիչ ինքնամփոփ է և մեկուսացած: Վարքի շեղումներ ունեցող աշակերտներ չկան: Աշակերտների մի մասը ընթերցասեր է, կան պարող և երաժշտական գործիքներ նվագող աշակերտներ: Դասարանի տղաները ֆիզիկապես պատրաստված և ուժեղ են, ինչով էլ պայմանավորված սիրում են մասնակցել արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներին: Նրանք հայրենասեր են և ունեն հայրենիքի նկատմամբ պատասխանատվության բարձր զգացում: Աղջիկները սիրում են մասնակցել արտադասարանական միջոցառումներին, երբեմն հանդես են գալիս սեփական նախաձեռնություններով: Վեց աշակերտ լավ ասմունքում են, ստեղծագործում, ուստի մասնակցում է ստեղծագործական շարադրությունների մրցույթների:

Դասարանի փոխհարաբերությունների բնութագիր:Աշակերտները համախմբված են,դասարանում տիրում է բարի մթնոլորտ: Դասարանի աշակերտները աշխույժ են , կատակասեր, ազնիվ ու ընկերասեր:Բոլոր աշակերտները հարգալից վերաբերմունք ունեն միմյանց , մեծերի և փոքրերի հանդեպ: Բարի են, պատրաստ են օգնելու և ձեռք մեկնելու բոլոր իրենց դիմողներին: Ծնողների և ուսուցիչների հետ համատեղ կարելի է շտկել դասարանի թերությունները և բարենպաստ մթնոլորտ ստեղծել աշակերտների ինքնադրսևորման և ինքնաբացահայտման համար, ինչպես նաև նպաստել նրանց մասնագիտական ճիշտ կողմնորոշմանը:

Դասղեկի ժամերի թեմատիկան

/ առաջին կիսամյակ/

N	Թեմա	Օր
1.	*Ավագ դպրոց. Իմ սպասելիքներն ու նպատակները*	*01.09*
2.	*Աշակերտի արտաքին տեսքը*	*07 .09*
3.	*Պատմիր ինձ իմ մասին /բացահայտիր ինքդ քեզ/*	*14.09*
4.	*Երբ բախվում են տարբեր պարտականությունները*	*21.09*
5.	*Առողջություն. Ինչին կարող է հանգեցնել նիհարելու ցանկությունը*	*28.09*
6.	*Ստեղծագործ աշխատանքի ուժը. Անի քաղաք*	*05.10*
7.	*Ես և մշակութային աշխարհը*	*12.10*
8.	*Մարդկային խղճի տարատեսակները*	*19.10*
9.	*Մեր և հավատ. Մարդկային կեցության բնութագրիչները*	*02.11*
10.	*Ճանաչիր երկիրը քո .վիրտուալ էքսկուրսիա*	*09.11*
11.	*Հանդուրժողականություն.ինչպիսին կուզեի լինել*	*16.11*
12.	*Խոսում են արքաները*	*23.11*
13.	*Երջանկության ձգտում. Երջանիկ լինելու իմ բանաձևը*	*07.12*
14.	*Իմ կյանքը մենակության մեջ կամ անմարդաբնակ կղզում/ կոլեկտիվի էթիկայի նորմերի մշակում/*	*14.12*
15.	*Հավերժական նոր տարի. Իմ տոնածառը*	*21.12*

/երկրորդ կիսամյակ/

	Թեմա	Օր
1.	Ես մարդ եմ.	.01
2.	Երեխայի առողջության պահպանման իրավունք	.01
3.	Բիզնեսի և մեծ բիզնեսմենների մասին	.01
4.	Հանուն հայրենիքի ես պատրաստ եմ...	.01
5.	Միջավայրի ճնշում / թմրանյութ, ծխախոտ, ալկոհոլ- շնորհակալություն, ոչ/	.02
6.	Ազգային տոներ և սովորույթներ	.02
7.	Գրի և գրքի ուժը. Արյունոտ մատյան	.02
8.	Ազատություն.Ազատության դրսևորումներն ու սահմանները	.02
9.	Բարոյական դաստիարակություն. Ինչպես պահել քեզ մարդկանց մեջ	.03
10.	Հերոս մայրեր	.03
11.	Կոմպրոմիսը թուլություն թե անձի հաստատության նշան	.03
12.	Համակարգչային կախվածություն	.04
13.	Ծնող լինելը որպես կյանքի արժեք	.04
14.	Ինչպես անցկացնել ազատ ժամանակը	.04
15.	Եղեռն . հատուցում	.04
16.	Տիգրան Մեծի պատգամը	.05
17.	Հարգանք և խոնարհում հայրենանվեր զինվորներին	.05
18.	Ինչպիսին եմ տեսնում իմ ապագան 5 տարի հետո	.05
19.	Որտեղ գնալ սովորելու. Մեր երկրի ուսումնական հաստատությունները	.05

Սեպտեմբեր

Աշխատանքի ուղղվածությունը	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքի բովանդակությունը			
	07.09-14.09	11.09-15.09	18.09-21.09	25.09-28.09
Ուսումնական աշխատանքներ	Աշակերտներին ապահովել դասագրքերով : Աշխատանք դասամատյանով	Սոցանձնագրերի կազմում	Դասարանական ժողով. Դասարանում խորհրդի ստեղծում	Դասարանական անկյան ձևավորում Սահմանել հերթապահություն
Իրավական և քաղաքացիական դաստիարակություն				Ընտրել աշակերտական խորհրդի անդամներ և նախագահ :
Առողջ ապրելակերպ և ֆիզիկական դաստիարակություն			Աշակերտների առողջության զննում, նրանց առողջական տվյալների հավաքում, ֆիզկուլտուրայի խմբի որոշում :	
Ռազմա-հայրենասիրական և հայրենագիտական դաստիարակություն				Զրույց. « Ինչ տվեց մեզ անկախությունը»
Գեղագիտական դաստիարակություն	Մասնակցություն Գիտելիքի օրվան նվիրված միջոցառմանը			Մասնակցություն վիկտորինայի
Աշխատանք ծնողների հետ		Հրավիրել ծնողական ժողով, Ընտրել ծնողկոմիտեի նախագահ և անդամներ:		

Հոկտեմբեր

Աշխատանքի ուղղվածությունը	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքի բովանդակությունը			
	30.09-05.10	05.10-12.10	12.10-17.10	18.10-20.10
Ուսումնական աշխատանքներ	Ստուգել դասագրքերը	Վարքի դասարանական նորմերի մշակում: Դաստիարակվածության մակարդակի որոշում		Համագործակցել առարկայական ուսուցիչների հետ,վեր հանել հետ մնացող աշակերտների ցուցակը
Առողջ ապրելակերպ և ֆիզիկական դաստիարակություն			Մասնակցություն Սպորտային միջոցառումներին	
Գեղագիտական և բարոյական դաստիարակություն	Այցելություն միայնակ ծերերին	Աշունը և մենք:Դասարանի աշնանային ձևավորում	Երաժշտությունն իմ կյանքում:Մանուր յանական լսումներ	
Աշխատանք ծնողների հետ				Հրավիրել ծնողական ժողով, քննարկել դասարանի վարքի և առաջադիմության հարցեր

Նոյեմբեր

Աշխատանքի ուղղվածությունը	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքի բովանդակությունը			
	02.11-09.11	09.11-16.11	16.11-23.11	23.11-30.11
Ուսումնական աշխատանքներ	Դասալսումներ	Աշակերտների վարքի ուսումնասիրում		Կազմակերպել լրացուցիչ օգնություն ուսման մեջ ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների հետ:
Հայրենասիրական դաստիարակություն			Ես հայրենիքս գրկած եմ ապրում. շարադրություն	
Գեղագիտական դաստիարակություն	Ես հասարակական տրանսպորտում			Թումանյանական ընթերցումներ
Առողջ ապրելակերպ		Աշնանային կրոսավազք		
Աշխատանք ծնողների հետ	Աշխատանք ծնողկոմիտեի հետ			Անհատական խորհրդատվությունների կազմակերպում

Դեկտեմբեր

Աշխատանքի ուղղվածությունը	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքի բովանդակությունը			
	07.12-14.12	14.12-20.12	20.12-22.12	
Ուսումնական աշխատանքներ	Աշխատանք օժտված աշակերտների հետ: Օլիմպիադաների կազմակերպում		Կիսամյակի ամփոփում Անձնական գործերի լրացում :	
Առողջ ապրելակերպ և ֆիզիկական դաստիարակություն	Ես գիտեմ ՁԻԱՀ- ի մասին	/Մասնակցություն սպորտային միջոցառումներին /վոլեյբոլի մրցույթ		
Գեղագիտական դաստիարակություն		ՆՎեր. Ինչ նվիրել և ինչպես	Դասարանի ամանորյա ձնավորում	
Աշխատանք ծնողների հետ			Հրավիրել ծնողական ժողով, ամփոփել 1-ին կիսամյակի արդյունքները	

Աշխատանք ծնողների հետ

Ամսաթիվ	Անուն Ազգանուն	Աշխ. բովանդակությունը	Նշումներ

Անհատական աշխատանք աշակերտների հետ

Ամսաթիվ	Անուն Ազգանուն	Աշխ. բովանդակությունը	Նշումներ

Դասարանի բնութագիրը տարեվերջին

Դասարանի առաջադիմությունը ուսումնական տարվա վերջում

-Առաջադիմությունը /%/_____

-Որակը_____

-Գերազանց_____

-Հարվածային_____

- Ամառային առաջադրանք ունեցող /և առարկան/ _____

_____

Դաստիարակչական աշխատանքների ուղղությունները

Ուսումնական աշխատանքներ – Աշակերտներին ապահովել դասագրքերով: Ընտրել աշակերտական խորհրդի անդամներ և նախագահ : Սահմանել ամենօրյա հերթապահություն , ստեղծել դասարանական անկյուն: Յուրաքանչյուր շաբաթ անցկացնել դասաղեկի ժամ, ստուգել օրագրերը և ստորագրել: Աշակերտների մոտ սերմանել հարգալից վերաբերմունք միմյանց և շրջապատի նկատմամբ , ինչպես նաև դպրոցի գույքի, դասագրքերի նկատմամբ: Աշակերտներին օգնել պլանավորել իրենց գործունեությունը , օբյեկտիվորեն գնահատել իրենց հնարավորությունները :Համագործակցելով ծնողների և դասավանդող ուսուցիչների հետ՝ հետևել աշակերտների առաջադիմությանը և վարքին :Կազմակերպել լրացուցիչ օգնություն ուսման մեջ ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների հետ: Աշխատանք տանել օժտված աշակերտների հետ: Բացահայտել և պաշտպանել աշակերտների հետաքրքրությունները:

Իրավական և քաղաքացիական դաստիարակություն –

Ծանոթացնել աշակերտների իրավունքներին ու պարտականություններին:

Խթանել իրավագիտակցության և հանդուրժողականության զարգացմանը: Ձևավորել քաղաքացիական պատասխանատվություն և արժանապատվություն, հարգանք իր երկրի նկատմամբ: Նպաստել երեխաների միասնականության, փոխըմբռնման,խաղաղ, ներդաշնակ հարաբերությունների խթանմանը: Բացառել բռնությունը, ծայրահեղական մտածելակերպն ու վարքագիծը:

Առողջ ապրելակերպ և ֆիզիկական դաստիարակություն

Աշակերտների առողջության զննում, առողջության տվյալների հավաքում:Յուրաքանչյուր շաբաթվա առաջին օրը համարել սանիտարական օր:Ծնողական ժողովներում կարևորել առողջության թեման և խոսել <<Մենք ընտրում ենք առողջ ապրելակերպ>> թեմայով:Ֆիզկուլտուրայի ուսուցչուհու հետ համագործակցելով ՝ կազմակերպել երեխաների ֆիզիկական զարգացման և առողջությանը նպաստող ակտիվ միջոցառումներ՝ մրցույթներ, էքսկուրսիաներ, սպորտլանդիաներ: : Երեխաների մոտ ձևավորել ճիշտ վերաբերմունք ֆիզկուլտուրայի դասերի նկատմամբ: Անցկացնել կանխարգելիչ աշխատանքներ.«Ինչպես խուսափել դժբախտ պատահարներից»:

Ռազմահայրենասիրական և հայրենագիտական դաստիարակություն – Աշակերտների մեջ սերմանել սեր դեպի հայրենիք: Կազմակերպել էքսկուրսիաներ պատմական նշանակություն ունեցող վանքեր , եկեղեցիներ : Առանձնահատուկ ուշադրություն դարձնել մեր բնակավայրի վանքին ու եկեղեցուն : Աջակցել զինղեկին , կազմակերպել ռազմարզական խաղեր: Ծանոթացնել հայ ժողովրդի անցած ուղու հետ, իմանալ սեփական ակունքները: Կարևորել սերունդների կապը պատմության մեջ , ինչը կնպաստի պատմական ժառանգականության ընկալմանը: Ցույց տալ Հայաստանի և հայ ժողովրդի դերը քաղաքակրթության մեջ:

Բնապահպանական դաստիարակություն- Աշակերտների մոտ բնության , շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար վերաբերմունք սերմանելու նպատակով կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկ: Ծանոթացնել Կարմիր գրքում ընդգրկված բույսերին և կենդանիներին: Կազմակերպել և անցկացնել կլոր սեղաններ «Երկիր մոլորակի խնդիրները» թեմայով, «Ինչպես կազմակերպել գյուղի աղբահանումը» թեմայով առաջարկություններ անել, ծրագիր առաջարկել:

Աշխատանք ծնողների հետ

Ծնողական կոմիտեի ստեղծում, նրանց հետ համագործակցություն: Ծնողական ժողովների կանոնավոր անցկացում :Ապահովել ծնող –երեխա-ուսուցիչ փոխհարաբերությունը:Համագործակցելով ծնողների հետ՝ հետևել աշակերտների առաջադիմությանը և վարքին :Ընտանեկան տոների կազմակերպում:

Գեղագիտական դաստիարակություն- Աշակերտների մեջ սերմանել գեղեցիկը գնահատելու և բարին ճանաչելու շնորհք:Կազմակերպել այցելություններ պատկերասրահներ, թանգարաններ: Տարբեր բնապահպանական թեմաներով զրուցներով՝ ձևավորել բնության նկատմամբ պատասխանատվության զգացում , բնության մեջ իրենց պահելու կուլտուրան:

Կազմակերպել էքսկուրսիա դեպի թատրոն:
Կազմակերպել դասական երաժշտության ունկնդրում:
Մասնակցություն ցուցաբերել դպրոցում կազմակերպվող բոլոր միջոցառումներին:
Մասնակցել կազամկերպվող շարադրությունների, ասմունքի մրցույթներին:
Ուրախ դիմակահանդես. ուրախ դիմավորենք Նոր տարին:

Աշխատանքային և հոգևոր դաստիարակություն - Մասնակցել Կազմակերպել հանդիպում հոգևոր առաջնորդի հետ:Հոգևոր երաժշտության ունկնդրում:Կազմակերպել էքսկուրսիաներ պատմական նշանակության վանքեր, եկեղեցիներ:Դաստիարակել սեր դեպի աշխատանքը:Կարևորել աշխատանքի անհրաժեշտությունը, նրա պատճառած ուրախությունները:Ապահովել մասնակցություն ձեռքի աշխատանքների ցուցահանդեսներին:
Աշակերտների մոտ աշխատանքային կուլտուրա մշակելու նպատակով ծանոթացնել խոհարարական կայքերին:Անցկացնել զրույց «Պետք է , որ մարդը աշխատի»:
Մասնակցել դպրոցում և գյուղում կազմակերպվող շաբաթօրյակներին:
Հանդես գալ առաջարկությամբ. «Ինչ անել , որ գյուղս մաքուր լինի:»

Ծնողական ժողովների թեմատիկա

1. Պատասխանատվությունը սեփական արարքների համար
2. Ինչպես հաղթահարել ուսումնական դժվարությունները:
3. Ընտանիքի դերը երեխայի արժեքային համակարգի ձևավորման գործում
4. Պատասխանատվությունը սեփական արարքների համար
5. Ինչպես օգնել երեխային մասնագիտության ընտրության հարցում
6. Ուսումը դասերից հետո:
7. Ինչպես լինել լավ ծնողներ/ կլոր սեղան/:
8. Երեխայի բարոյական դաստիարակությունը ընտանիքում

Ծնողական ժողովներ

Անցկացման օրը	Քննարկվող հարցերը	Համառոտ բովանդակությունը
14.09.2023թ	Ծնողկոմիտեի ընտրություն,սոցանձնագրերի կազմում,դժվար տարիք	Ընտրվեց ծնողկոմիտե

Ամենօրյա աշխատանքներ	Աշակերտների հաշվառում Կարգապահության վերահսկում Աշխատանք դասամատյանով Դասարանի մաքրության վերահսկում
Ամենշաբաթյա աշխատանքներ	Սանիտարահիգիենիկ վիճակի ստուգում Օրագրերի ստուգում Դասալսումներ Խորհրդատվության օր ծնողների համար Աշխատանք առարկայական ուսուցիչների հետ Դասղեկի ժամ Անհատական աշխատանք աշակերտների հետ/երկուշաբթի/
Ամենամսյա աշխատանքներ	Հաշվետվությունների ներկայացում Ծնողական ժողովների անցկացում
Տարեկան աշխատանքներ	Դաստիարակչական աշխատանքների պլանի կազմում Դասագրքերի բաշխում, հավաքում Նպատակային էքսկուրսիաների կազմակերպում/2 անգամ/ Կիսամյակային և տարեկան գնահատա-կանների զեկույց - ամփոփում

Համագործակցությունը առարկայական ուսուցիչների հետ

Ամսաթիվը	Առարկա	Ուսուցիչ	Նպատակը	Արդյունքը

Սովորողի իրավունքներն ու պարտականությունները

1. Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ եւ պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով եւ ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

2. Սովորողն իրավունք ունի՝

1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.

2) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը եւ ուսուցման ձեւը, ինչպես նաեւ տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ.

3) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից.

4) մասնակցելու ներդպրոցական եւ արտադպրոցական միջոցառումների.

5) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական եւ հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական եւ այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը.

6) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.

7) ազատորեն փնտրելու եւ մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

8) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

9) օգտվելու օրենքով եւ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3. Սովորողը պարտավոր է՝

1) կատարել ուսումնական հաստատության կանոնադրության եւ ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները.

2) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել եւ տիրապետել համապատասխան հմտությունների եւ կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները.

3) հաճախել եւ մասնակցել ուսումնական պարապմունքներին.

4) կատարել օրենքով եւ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

Սովորողի ծնողի իրավունքներն ու պարտականությունները

1. Սովորողի ծնողն իրավունք ունի՝

1) երեխայի ուսուցման համար ընտրելու ուսումնական հաստատությունը եւ կրթության ձեւը.

2) համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով.

3) դիմելու համապատասխան մարմիններին երեխայի զարգացման, ուսուցման եւ դաստիարակության հարցերով.

4) պաշտպանելու իր եւ իր երեխայի օրինական շահերը համապատասխան մարմիններում.

5) մասնակցելու հանրակրթական ծրագրերի իրականացման եւ դրանց արդյունավետության գնահատման գործընթացին.

6) մասնակցելու ուսումնական հաստատության ներքին գնահատմանը.

7) մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը՝ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:

Սովորողի ծնողն ունի նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

2. Սովորողի ծնողը պարտավոր է՝

1) երեխայի համար ընտանիքում ապահովել համապատասխան պայմաններ կրթություն ստանալու համար.

2) մշտապես հոգալ երեխայի ֆիզիկական առողջության եւ հոգեկան վիճակի մասին, ստեղծել համապատասխան պայմաններ երեխայի հակումների եւ ընդունակությունների զարգացման, կրթական կարիքների բավարարման համար.

3) հարգել երեխայի արժանապատվությունը, դաստիարակել աշխատասիրություն, բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, գթասրտություն, հարգալից վերաբերմունք ընտանիքի, մեծահասակների, պետական եւ մայրենի լեզվի, ժողովրդական ավանդույթների եւ սովորույթների նկատմամբ.

4) դաստիարակել հարգանք ազգային, պատմական, մշակութային արժեքների եւ հայրենիքի նկատմամբ, հոգատար վերաբերմունք պատմամշակութային հարստության եւ շրջակա միջավայրի նկատմամբ, հանդուրժողական վերաբերմունք այլ ժողովուրդների եւ մշակույթների նկատմամբ.

5) դաստիարակել հարգանք ուսումնական հաստատության եւ մանկավարժական աշխատողների նկատմամբ.

6) սույն օրենքի 15-րդ եւ 16-րդ հոդվածներով սահմանված ժամկետներում երեխային բերել ուսումնական հաստատություն.

7) հատուցել իր, ինչպես նաեւ իր երեխայի կողմից ուսումնական հաստատությանը հասցված վնասը.

8) սովորողին զերծ պահել ծխախոտ, ոգելից խմիչքներ, հոգեմետ նյութեր, զենք, զինամթերք, թունավոր, պայթուցիկ, ինչպես նաեւ օրենքով եւ ուսումնական հաստատության կանոնադրությամբ արգելված այլ նյութեր օգտագործելուց:

Մեր դասարանի կանոնները

- Դասերին ներկայանալ ժամանակին և պատրաստ
- Միմյանց օգնել դասերը պատրաստելիս
- Խնամքով վերաբերվել դասագրքերին
- Մասնակցել դասարանի մաքրության աշխատանքներին
- Լսել և հարգել դիմացինի կարծիքը
- Ենթարկվել դպրոցական կարգուկանոնին
- Հետևել առողջ ապրելակերպի կանոններին
- Լինել հանդուրժող
- Ովքեր քեզանից տարբեր են ,արդարացի վարվել նրանց նկատմամբ

Մեր կարգախոսն է

Որտեղ կա կամք, այնտեղ կա հաջողություն

ԴԱՍԱՑՈՒՅԱԿ

1	Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ
2					
3					
4					
5					
6					
7					